

Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ

«Գործարար վարչարարություն (կառավարում)»

հեռավար մագիստրոսական կրթական ծրագիր

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

«Կառավարում» մասնագիտության «Գործարար վարչարարություն (կառավարում)» հեռավար կրթական ծրագրով մագիստրատուրա կարող են դիմել պետական և ըստ համապատասխան մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտները (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս):

Ընդունելության հարցազրույց

«Կառավարում» մասնագիտության «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրով դիմորդները հանձնում են ընդունելության մեկ բանավոր քննություն՝ հարցազրույցի ձևով, որի ընթացքում ստուգվում են տնտեսագիտության հիմունքների իմացությունը, բիզնես-կողմնորոշումը, լեզուների իմացությունը, ընդհանուր զարգացածության աստիճանը և մտածողությունը:

Ընդունելության քննություններին մասնակցելու համար դիմումը տրվում է Կազմակերպության ռեկտորի/տնօրենի անունով՝ կցելով համապատասխան փաստաթղթեր՝

1) բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

2) ինքնակենսագրություն և 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի),

3) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),

4) անձը հաստատող փաստաթուղթ (Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիրը, նույնականացման քարտը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը կամ ժամանակավոր վկայականը),

5) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք,

6) փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար սահմանված գումարը վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

Դիմորդը փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:



Հեռավար ուսուցման ձևով մագիստրատուրայի փաստաթղթերի ընդունումը կատարվում է մինչև **ս.թ. օգոստոսի 25-ը**:



Ընդունելության ծառայությունների համար դիմորդը վճարում է 5000 ՀՀ դրամ:



Ընդունելության քննություններին մասնակցող աշխատող դիմորդներին անհրաժեշտության դեպքում տրվում է տեղեկանք:



Ծրագրի վեբկայք՝ <https://online.isec.am/>

Դիմել՝

ՀՀ պետական կառավարման ազդեցմիա, հասցե՝ Երևան, Կիևյան փ. 8, Հեռ.՝ (374) 10 269259,

(374) 10 228934, Էլ. փոստ՝ info@paara.am, aspa.paara@gmail.com

Վեբկայք՝ www.paara.am

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, հասցե՝ Երևան, Մ. Բաղդասյան 24դ, 2-րդ հարկ, Հեռ.՝ (374) 524812, Էլ. փոստ՝ info@isec.am, fordep@isec.am

Վեբկայք՝ www.isec.am